ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 27 » դեկտեմբերի 2021թ. №62-Ա

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

**համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Լոռի Բերդ համայնքի ավագանու 2021թ. դեկտեմբերի 27-ի նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մարտիրոսյան Հուսիկ Հենրիկի | (ստորագրություն) | | |
| Շահնազարյան Թամարա Էդիկի | (ստորագրություն) | | |
| Զատինյան Կարեն Հրաչիկի | (ստորագրություն) | | |
| Զիբուխչյան Արման Հրաչիկի | (ստորագրություն) | | |
| Պապյան Հարություն Միշիկի | (ստորագրություն) | | |
| Սախլյան Էդգար Ռոբերտի | (ստորագրություն) | | |

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ.
2021թ. դեկտեմբերի 27
գ. Լոռի Բերդ

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու

2021թ. դեկտեմբերի 27-ի № 62-Ա որոշման

# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1) Լոռի Բերդ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի նիստի օրակարգի հաստատում:

2) Լոռի Բերդ համայնքի բնակիչներին սոցիալական օգնություն տրամադրելու վերաբերյալ;

3) Լոռի Բերդ համայնքի Կողես և Սվերդլով բնակավայրերում համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վրա՝ Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման լրացուցիչ ֆոնդի Բաղադրիչ 2-ով իրականացվող ծրագրի շրջանակներում արևային ֆոտոոլտային կայանների տեղադրմանը հավանություն տալու վերաբերյալ:

4) Լոռի Բերդ համայնքում 2022 թվականի համար տեղական տուրքերի, վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ:

5) Լոռի Բերդ համայնքի գույքի ցանկում փոփոխություններ կատարելու և գույքի սեփականության գույքագրման արդյունքները հաստատելու վերաբերյալ:

6) Լոռի Բերդ համայնքի Լեջան բնակավայրի բնակիչն հողի հարկի գծով արտոնություն տրամադրելու վերաբերյալ:

7) Մարտական գործողությունների հետևանքով զոհված, անհայտ կորած և հաշմանդամության կարգ ստացած Լոռի Բերդ համայնքի բնակիչներին և (կամ) նրանց ընտանիքներին միանվագ սոցիալական օգնություն տրամադրելու վերաբերյալ:

8) Լոռի Բերդ համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու վերաբերյալ:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**« 27 » դեկտեմբերի 2021թ. №63-Ա**

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Լոռի Բերդ համայնքի ավագանու 27.12.2017թ. թիվ 14-Ա որոշմամբ, ինչպես նաև հաշվի առնելով Լոռի Բերդ համայնքի Կողես բնակավայրի բնակիչ՝ Հովհաննես Պողոսյանի և Սվերդլով բնակավայրի բնակիչներ՝ Ժենիկ Դոլմազյանի և Արտուշ Հարությունյանի դիմումները՝

**համայնքի ավագանին որոշում է.**

**1.** Լոռի Բերդ համայնքի 2021թ. բյուջեի 10-07-01 դասակարգմամբ «Սոցիալական հատուկ արտոնություններ» ծրագրի 4729 հոդվածով նախատեսված գումարից 40.000-ական (քառասուն հազար) ՀՀ դրամի չափով սոցիալական օգնություն տրամադրել՝ Հովհաննես Պողոսյանին, Ժենիկ Դոլմազյանին և Արտուշ Հարությունյանին:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մարտիրոսյան Հուսիկ Հենրիկի | [signature] | | |
| Շահնազարյան Թամարա Էդիկի | [signature] | | |
| Զատինյան Կարեն Հրաչիկի | [signature] | | |
| Զիբուխչյան Արման Հրաչիկի | [signature] | | |
| Պապյան Հարություն Միշիկի | [signature] | | |
| Սախլյան Էդգար Ռոբերտի | [signature] | | |

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** [signature] **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ.

**2021թ. դեկտեմբերի 27**

**գ. Լոռի Բերդ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 27 » դեկտեմբերի 2021թ. №64-Ա

## ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԶՈՀՎԱԾ, ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ ՍՏԱՑԱԾ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԵՎ (ԿԱՄ) ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, ինչպես նաև Լոռի Բերդ համայնքի ավագանու 27.12.2017 թվականի թիվ 14-Ա և 14.04.2020 թվականի թիվ 14-Ա որոշումներով, ինչպես նաև հաշվի առնելով Լոռի Բերդ համայնքի ղեկավարի առաջարկությունը.

**համայնքի ավագանին որոշում է.**

**1.** Լոռի Բերդ համայնքի 2021թ. բյուջեի 10-07-01 դասակարգմամբ «Սոցիալական հատուկ արտոնություններ» ծրագրի 4729 հոդվածով նախատեսված գումարից 40.000-ական (քառասուն հազար) ՀՀ դրամի չափով միանվագ սոցիալական օգնություն տրամադրել՝ մարտական գործողությունների հետևանքով զոհված, անհայտ կորած և հաշմանդամության կարգ ստացած Լոռի Բերդ համայնքի բնակիչներին և (կամ) նրանց ընտանիքներին:

**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մարտիրոսյան Հուսիկ Հենրիկի | | | |
| Շահնազարյան Թամարա Էդիկի | | | |
| Զատինյան Կարեն Հրաչիկի | | | |
| Չիբուխչյան Արման Հրաչիկի | | | |
| Պապյան Հարություն Միշիկի | | | |
| Սախլյան Էդգար Ռոբերտի | | | |

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.

**2021թ. դեկտեմբերի 27**

**գ. Լոռի Բերդ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ու Մ

« 27 » դեկտեմբերի 2021թ. №65-Ա

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՋԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով և հաշվի առնելով Լեջան բնակավայրի բնակիչ Զավեն Միշիկի Թունյանի դիմումը.

**համայնքի ավագանին որոշում է.**

1. Զավեն Միշիկի Թունյանին հողի հարկի գծով տրամադրել հարկային արտոնություն 17.000 (տասնյոթ հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մարտիրոսյան Հուսիկ Հենրիկի | | | |
| Շահնազարյան Թամարա Էդիկի | | | |
| Զատինյան Կարեն Հրաչիկի | | | |
| Չիբուխչյան Արման Հրաչիկի | | | |
| Պապյան Հարություն Միշիկի | | | |
| Սախչյան Էդգար Ռոբերտի | | | |

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ.

**2021թ. դեկտեմբերի 27**

**գ. Լոռի Բերդ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 27 » դեկտեմբերի 2021թ. №66-Ա

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂԵՍ ԵՎ ՍՎԵՐԴԼՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ՝ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖՈՆԴԻ ԲԱՂԱԴՐԻՉ 2 ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, ինչպես նաև և հաշվի առնելով Լոռի Բերդ համայնքի ղեկավարի առաջարկությունը.

**համայնքի ավագանին որոշում է.**

**1.** Տալ հավանություն՝ Լոռի Բերդ համայնքի Կողես և Սվերդլով բնակավայրերում համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վրա՝ Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման լրացուցիչ ֆոնդի Բաղադրիչ 2 ծրագրերի շրջանակներում արևային ֆոտոոլտային կայանների տեղադրման առաջարկությանը:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մարտիրոսյան Հուսիկ Հենրիկի | | | |
| Շահնազարյան Թամարա Էդիկի | | | |
| Զատինյան Կարեն Հրաչիկի | | | |
| Զիբուխչյան Արման Հրաչիկի | | | |
| Պապյան Հարություն Միշիկի | | | |
| Սախոյան Էդգար Ռոբերտի | | | |

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ.

**2021թ. դեկտեմբերի 27**

**գ. Լոռի Բերդ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 27 » դեկտեմբերի 2021թ. №67-Ա

### ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ և 42-րդ կետերով և 77-րդ հոդվածի 3-րդ կետով՝

**համայնքի ավագանին որոշում է.**

1. Լոռի Բերդ համայնքի գույքի ցանկում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել Լոռի Բերդ համայնքի գույքի սեփականության գույքագրման արդյունքները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մարտիրոսյան Հուսիկ Հենրիկի | | | |
| Շահնազարյան Թամարա Էդիկի | | | |
| Չատինյան Կարեն Հրաչիկի | | | |
| Չիբուխչյան Արման Հրաչիկի | | | |
| Պապյան Հարություն Միշիկի | | | |
| Սախլյան Էդգար Ռոբերտի | | | |

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ.
**2021թ. դեկտեմբերի 27**
**գ. Լոռի Բերդ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**« 27 » դեկտեմբերի 2021թ. №68-Ա**

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ, ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 19-րդ, 20-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ հոդվածներով, ինչպես նաև «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝

**համայնքի ավագանին որոշում է.**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքում 2022 թվականի համար տեղական տուրքերի, վճարների տեսակները և դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մարտիրոսյան Հուսիկ Հենրիկի | | | |
| Շահնազարյան Թամարա Էդիկի | | | |
| Չատինյան Կարեն Հրաչիկի | | | |
| Չիբուխչյան Արման Հրաչիկի | | | |
| Պապյան Հարություն Միշիկի | | | |
| Սախլյան Էդգար Ռոբերտի | | | |

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ.
**2021թ. դեկտեմբերի 27**
**գ. Լոռի Բերդ**

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու

2021թ. դեկտեմբերի 27-ի №68-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

## ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

**1.** Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **տասնհինգ հազար դրամ**,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երեսուն հազար դրամ.**

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հիսուն հազար դրամ**.

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հիսուն հազար դրամ**.

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հարյուր հազար դրամ**.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երեք հազար դրամ**,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հինգ հազար** դրամ.

**2.** Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **երեք հազար դրամ**.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

**3.** Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ **հինգ հազար դրամ:**

**4.** Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **երկու հարյուր հազար դրամ.**

**5.** Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական

սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **վաթսուն հազար դրամ.**

**6.**Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հիսուն հազար դրամ.**

**7.** Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ**.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասը հազար հարյուր դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասներեք հազար հարյուր դրամ,**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քսան հազար հարյուր դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քսանհինգ հազար հարյուր դրամ**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քառասունհինգ հազար հարյուր դրամ**

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ.**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասը հազար հարյուր դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասներեք հազար հարյուր դրամ**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քսան հազար հարյուր դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քսանհինգ հազար հարյուր դրամ.**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քառասունհինգ հազար հարյուր դրամ.**

**8.** Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ **երեք հարյուր հիսուն դրամ՝** մեկ քառակուսի մետրի համար:

**9.** համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ **հինգ հազար դրամ,**

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **քսանհինգ հազար դրամ,**

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ **երկու հարյուր հազար դրամ,**

դ. խաղատների համար՝ **հինգ հարյուր հազար դրամ,**

ե. շահումով խաղերի համար՝ **երկու հարյուր հիսուն հազար դրամ,**

զ. վիճակախաղերի համար՝ **հարյուր հազար դրամ.**

**10.** Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ.**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **մեկ հազար վեց հարյուր դրամ.**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երեք հազար մեկ դրամ.**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **չորս հազար վեց հարյուր դրամ.**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **ութ հազար հարյուր դրամ.**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասնհինգ հազար հարյուր դրամ**

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երկու հարյուր դրամ.**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **մեկ հազար հարյուր դրամ**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երկու հազար հարյուր դրամ.**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **չորս հազար հարյուր դրամ.**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **ութ հազար հարյուր դրամ.**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասնհինգ հազար հարյուր դրամ**

**11.** Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **երկու հազար դրամ**,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **երեք հազար հինգ հարյուր դրամ,**

գ. սոցիալական գովազդի համար՝ **զրո դրամ**,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ **հազար հինգ հարյուր դրամ**.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի **25% չափով**,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի **10% չափով**:

**12.** Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հարյուր հազար դրամ.**

**13.** Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ **տասը հազար դրամ.**

**14.** Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հինգ հարյուր հազար դրամ.**

**15.** Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,**

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **հինգ միլիոն դրամ,**

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **յոթ միլիոն դրամ,**

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **տասը միլիոն դրամ.**

**16.** համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ **օրացուցային տարվա համար հիսուն հազար դրամ.**

**17.** համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում տասը հազար դրամ,

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում **մեկ հարյուր հազար դրամ**:

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

**1.** Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **տաս հազար դրամ**:

**2.** Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **հինգ հազար դրամ:**

**3.** Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **տաս հազար դրամ:**

**4.** Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **փաստացի կատարված ծախսերի չափով:**

**5.** Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար **հինգ հազար դրամ:**

**6.** համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **փաստացի կատարված ծախսերի չափով:**

**7.** Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է՝ ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ **ամսական հիսուն դրամ**

**8**. Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

1) առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ **մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսուն դրամ.**

2) հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ **մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսան դրամ.**

3) վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **տասնհինգ դրամ.**

4) գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ **մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ երեք դրամ.**

5) արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ **մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հինգ դրամ.**

6) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն սույն կետի 1-5-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափով.

7) շինություններում (այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ

աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն կետի 1-5-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափով:

9. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ **մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսուն դրամ:**

10. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին:

11. Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն բաժնի 8-րդ կետի 1-5 ենթակետերով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝ըստ ծավալի՝ **մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երեք հազար դրամ**:

12. Ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով – **մեկ խորանարդ մետրի համար 50 դրամ**

13. Ջրմուղ-կոյուղու համար ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար մեկ անձի համար՝ **վեց հարյուր դրամ:**

14. Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **երկու հազար դրամ:**

15.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ **մեկ հազար դրամ** փոխհատուցման վճար:

16.Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճար հետևյալ դրույքաչափերով.

1) կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվության համար՝ **հինգ հարյուր դրամ.**

2) ծննդօգնության թեթև միջամտության համար՝ **մեկ հազար դրամ,** ծանր միջամտության համար՝ **հինգ հազար դրամ.**

3) վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների).

-մանր կենդանիների համար՝ **մեկ հարյուր դրամ.**

-խոշոր կենդանիների համար՝ **երկու հարյուր դրամ.**

4) կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքարի համար՝ **երկու հարյուր դրամ.**

5) ախտահանության մեկ քառ. մետրի համար՝ **երկու հարյուր դրամ.**

6) միջատազերծման (դեզինսեկցիա) մեկ քառ. մետրի համար՝ **մեկ հարյուր դրամ.**

7) կրծողների ոչնչացման (դեռատիզացիա) մեկ քառ. մետրի համար՝ **երկու հարյուր դրամ.**

8) արհեստական սերմնավորման համար՝ **հինգ հազար դրամ.**

9) կենդանու հերձման համար՝

-մանր կենդանիների ՝ **մեկ հազար դրամ.**

-խոշոր կենդանիների ՝ **երեք հազար դրամ.**

10) կենդանու բուժման համար՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից ՝ յուրաքանչյուր այցելության համար՝ **մեկ հազար դրամից երկու հազար դրամ.**

11) կենդանիների նախասպանդային զննման համար՝

-մանր կենդանիների ՝ **մեկ հազար դրամ.**

-խոշոր կենդանիների ՝ **երկու հազար դրամ.**

12) կենդանիների հետսպանդային զննման համար՝

-մանր կենդանիների ՝ **մեկ հազար դրամ.**

-խոշոր կենդանիների ՝ **երկու հազար դրամ.**

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 27 » դեկտեմբերի 2021թ. № 69

### ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 18-ի 1-ին մասի 5-րդ կետով՝

**համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Լոռի Բերդ համայնքի 2022թ. բյուջեի եկամուտները.
վարչական բյուջեի գծով - 223070,9 հազար դրամ
ֆոնդային բյուջեի գծով - 86282.7 հազար դրամ
ընդհանուր - 280545.9 հազար դրամ

2. Հաստատել Լոռի Բերդ համայնքի 2022թ. բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման.
վարչական բյուջեի գծով - 223070,9 հազար դրամ
ֆոնդային բյուջեի գծով - 151282.7 հազար դրամ
ընդհանուր - 345545.9 հազար դրամ

3. Հաստատել Լոռի Բերդ համայնքի 2022թ. բյուջեի մասով հավելուրդը.
վարչական բյուջեի գծով 0 դրամ
ֆոնդային բյուջեի գծով 65000.0 հազար դրամ
ընդհանուր 65000.0 հազար դրամ

4. Սահմանել, որ.
**4.1.** Ծախսերի ֆինանսավորումը կատարվում է փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունը,
**4.2.** Բյուջեի կատարման ընթացքում Լոռի Բերդ համայնքի ղեկավարը «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի հոդված 33 ի 3-րդ մասի համաձայն՝ կարող է կատարել վերաբաշխումներ, որոնց հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեի 20 տոկոսը:
Կցվում են 2022թ. բյուջեի նախագծի 1-5 հավելվածները:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մարտիրոսյան Հուսիկ Հենրիկի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Շահնազարյան Թամարա Էդիկի | | | |
| Չատինյան Կարեն Հրաչիկի | | | |
| Չիբուխչյան Արման Հրաչիկի | | | |
| Պապյան Հարություն Միշիկի | | | |
| Սախյան Էդգար Ռոբերտի | | | |

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ.
**2021թ. դեկտեմբերի 27**
**գ. Լոռի Բերդ**

Հավելված
Լոռի Բերդ համայնքի ավագանու
դեկտեմբերի 27-ի թիվ 84-Ա որոշման

# Ց Ա Ն Կ
## Լոռի Բերդ համայնքի գույքացանկում ավելացման ենթակա գույքի

| Գույքի անվանումը | Չափի միավորը | Հաշվեկշ. արժեք /դրամ/ | քանակ | Գումար /դրամ | Բնակավայրը |
|---|---|---|---|---|---|
| Գեներատոր ՏՈՏԱԼ 5.5կվ | հատ | 500 000 | 1 | 500 000 | Լոռի Բերդ |
| Գութանկախովի ՊԼՆ 5-35Պ | հատ | 1 500 000 | 1 | 1 500 000 | Լոռի Բերդ |
| Աէրոբիկայիններքնակ | հատ | 4 000 | 10 | 40 000 | Սվերդլով |
| ՏաքացուցիչTESI | հատ | 20 000 | 2 | 40 000 | Ուռուտ |
| ՏաքացուցիչTESI | հատ | 20 000 | 1 | 20 000 | Բովաձոր |
| Էլեկտրական տաքացուցիչРесанта ТЭКП-2000 | հատ | 18500 | 1 | 18500 | Բովաձոր |
| Էլեկտրական տաքացուցիչРесанта ТЭКП | հատ | 18500 | 1 | 18500 | Յաղդան |
| Էլեկտրական տաքացուցիչРесанта ТЭКП | հատ | 18500 | 1 | 18500 | Լեջան |
| Էլեկտրական տաքացուցիչРесанта ТЭКП | հատ | 18500 | 1 | 18500 | Ուռուտ |
| Էլեկտրական տաքացուցիչРесанта ТЭКП-3000 | հատ | 30000 | 2 | 60000 | Կողես |
| Էլեկտրական տաքացուցիչРесанта ТЭКП-3000 | հատ | 30000 | 2 | 60000 | ԼոռիԲերդ |
| Էլեկտրական տաքացուցիչРесанта ТЭКП-3000 | հատ | 30000 | 2 | 60000 | Սվերդլով |
| Էլեկտրական տաքացուցիչРесанта ТЭКП-3000 | հատ | 30000 | 1 | 30000 | Բովաձոր |
| Էլեկտրական տաքացուցիչРесанта ТЭКП-3000 | հատ | 30000 | 1 | 30000 | Ուռուտ |
| ՊրոյեկտորCaktus CS-PRM.06B.WVGA | հատ | 99900 | 1 | 99900 | Կողես |
| Պրոյեկտորի էկրան Caktus CS-PSW-150x150 | հատ | 32800 | 1 | 32800 | Կողես |

### Լոռի Բերդ համայնքի գույքացանկից պակասեցման ենթակա գույքի

| Գույքի անվանումը | Չափի միավորը | Հաշվեկշ. արժեք /դրամ/ | քանակ | Գումար /դրամ | Բնակավայրը |
|---|---|---|---|---|---|
| Հարվածող գործիքներ | հատ | 4608 | 1 | 4608 | գ.Ագարակ |
| Խոտհնձիչ | հատ | 75000 | 1 | 75000 | գ.Ագարակ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Աթոռներ | հատ | 2500 | 6 | 15000 | գ.Ազարակ |
| Էլեկտրական տաքացուցիչ համակարգ | հատ | 35000 | 5 | 175000 | գ.Լոռի Բերդ |
| UPS | հատ | 10500 | 1 | 10500 | գ.Լոռի Բերդ |
| UPS 500VXL | հատ | 27857 | 1 | 27857 | գ.Լոռի Բերդ |
| Սառնարան | հատ | 9600 | 1 | 9600 | գ.Լոռի Բերդ |
| Լազերային տպիչ | հատ | 34286 | 1 | 34286 | գ.Լոռի Բերդ |
| Գրասեղան | հատ | 301 | 2 | 602 | գ.Լոռի Բերդ |
| Աթոռ | հատ | 0 | 6 | 0 | գ.Լոռի Բերդ |
| Էլ.հաշվիչ | հատ | 4200 | 1 | 4200 | գ.Լոռի Բերդ |
| Աթոռ | հատ | 12 | 4 | 48 | գ.Լոռի Բերդ |
| Ատամանկա | հատ | 60 | 1 | 60 | գ.Լոռի Բերդ |
| Ուղեգորգ | մետր | 2 | 4 | 8 | գ.Լոռի Բերդ |
| Խալաթ | հատ | 46 | 2 | 92 | գ.Լոռի Բերդ |
| Բարձի երես | հատ | 8 | 2 | 16 | գ.Լոռի Բերդ |
| Սփռոց սավան | հատ | 8 | 2 | 16 | գ.Լոռի Բերդ |
| Շիրմա | հատ | 23 | 1 | 23 | գ.Լոռի Բերդ |
| Երեսսրբիչ | հատ | 8 | 1 | 8 | գ.Լոռի Բերդ |
| Սավան | հատ | 15 | 2 | 30 | գ.Լոռի Բերդ |
| Ծածկոց | հատ | 146 | 1 | 146 | գ.Լոռի Բերդ |
| Պիլոնկա | հատ | 15 | 4 | 60 | գ.Լոռի Բերդ |
| Մանկական սանտիմետր | հատ | 15 | 1 | 15 | գ.Լոռի Բերդ |
| Վառարան | հատ | 3200 | 1 | 3200 | գ.Լոռի Բերդ |
| Մանկական կշեռք | հատ | 15 | 1 | 15 | գ.Լոռի Բերդ |
| Գրասեղան | հատ | 28 | 1 | 28 | գ.Լոռի Բերդ |
| Գրքեր /դպրոցիներհանձնված/ | հատ | 70 | 905 | 63350 | գ.Լոռի Բերդ |
| Տաքացուցիչ փչովի | հատ | 7500 | 4 | 30000 | գ.Լեջան |
| UPS | հատ | 45000 | 1 | 45000 | գ.Լեջան |
| Բազմոց | հատ | 480 | 2 | 960 | գ.Լեջան |
| Հեռախոս դելտա358 CKD | հատ | 12000 | 1 | 12000 | գ.Ուռուտ |
| Դաշնամուր | հատ | 1500 | 1 | 1500 | գ.Ուռուտ |
| Էլ պլիտա | հատ | 350 | 1 | 350 | գ.Ուռուտ |
| Mouse –մուկ | հատ | 8000 | 1 | 8000 | գ.Ուռուտ |
| Գորգ հատակի | հատ | 70 | 2 | 140 | գ.Ուռուտ |
| Կանթեղ | հատ | 5 | 4 | 20 | գ.Ուռուտ |
| Գրապահարան | հատ | 270 | 1 | 270 | գ.Ուռուտ |
| Ոնիտազ | հատ | 33600 | 1 | 33600 | գ.Ուռուտ |
| Գրասեղան 2 տումբանի | հատ | 120 | 1 | 120 | գ.Ուռուտ |
| Սեղան | հատ | 132 | 3 | 396 | գ.Ուռուտ |
| Ընթերցասեղան | հատ | 160 | 2 | 320 | գ.Ուռուտ |
| Գրադարակ | հատ | 70 | 95 | 6,650 | գ.Ուռուտ |
| Պահարան | հատ | 400 | 2 | 800 | գ.Ուռուտ |
| Պահարան մանկական | հատ | 152 | 7 | 1,064 | գ.Ուռուտ |
| Մահճակալ մանկական | հատ | 98 | 20 | 1,960 | գ.Ուռուտ |
| Սեղան մեկ տումբանի | հատ | 120 | 1 | 120 | գ.Ուռուտ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Բազմոց | հատ | 800 | 1 | 800 | գ.Ուռուտ |
| Բազկաթոռ | հատ | 17600 | 1 | 17600 | գ.Ուռուտ |
| Բազմաֆունկցիոնալ սարք SamsungSCX-3405 Mono Laser All-in-One 3*1print kopier-scanner | հատ | 19600 | 1 | 19600 | գ.Սվերդլով |
| Բալգարկա | հատ | 52500 | 1 | 52500 | գ.Սվերդլով |
| Ստերիլիզատոր | հատ | 520 | 1 | 520 | գ.Սվերդլով |
| Լուսամփոփ | հատ | 192,5 | 1 | 192,5 | գ.Սվերդլով |
| ՊրոցեսորMercury | հատ | 0 | 1 | 0 | գ.Սվերդլով |
| Մոնիտոր Samsung Sung Master 743NX | հատ | 33429 | 1 | 33429 | գ.Սվերդլով |
| Աթոռ | հատ | 11000 | 7 | 77000 | գ.Սվերդլով |
| Աթոռ թատերական | հատ | 4000 | 13 | 52000 | գ.Սվերդլով |
| Շկաֆ կոմպլեկտ | հատ | 1644 | 1 | 1644 | գ.Սվերդլով |
| Բազմոց | հատ | 2615,6 | 1 | 2615,6 | գ.Սվերդլով |
| Բազկաթոռ | հատ | 2615,6 | 2 | 5231,2 | գ.Սվերդլով |
| Գրասեղան | հատ | 1100 | 4 | 4400 | գ.Սվերդլով |
| Երկաթյա տակառ | հատ | 7000 | 2 | 14000 | գ.Սվերդլով |
| Պահարան բժշկական | հատ | 1854.2 | 1 | 1854.2 | գ.Սվերդլով |
| Հասակաչափ | հատ | 300 | 1 | 300 | գ.Սվերդլով |
| Սառնարան | հատ | 2560 | 1 | 2560 | գ.Բովաձոր |
| Հեռուստացույց | հատ | 6300 | 1 | 6300 | գ.Բովաձոր |
| Հեռախոսի ապարատ | հատ | 8920 | 1 | 8920 | գ.Բովաձոր |
| Մարտկոց | հատ | 22300 | 1 | 22300 | գ.Բովաձոր |
| Կլոր աթոռ | հատ | 420 | 3 | 1260 | գ.Բովաձոր |
| Աթոռ | հատ | 400 | 6 | 2400 | գ.Բովաձոր |
| համակարգիչPDV2800 | հատ | 56900 | 1 | 56900 | գ.Յաղդան |
| Manitor17Samsung9 | հատ | 20830 | 1 | 20830 | գ.Յաղդան |
| Printer1610 | հատ | 18600 | 1 | 18600 | գ.Յաղդան |
| UPS | հատ | 12000 | 1 | 12000 | գ.Յաղդան |
| Համակարգիչ | հատ | 94300 | 2 | 188600 | գ.Յաղդան |
| Manitor | հատ | 28900 | 2 | 57800 | գ.Յաղդան |
| UPS | հատ | 20100 | 2 | 40200 | գ.Յաղդան |
| Ակորդիոն | հատ | 0 | 1 | 0 | գ.Յաղդան |
| Էլ. Իոնիկա | հատ | 0 | 1 | 0 | գ.Յաղդան |
| Թմբուկ | հատ | 0 | 1 | 0 | գ.Յաղդան |
| Գազօջախ | հատ | 435 | 2 | 870 | գ.Յաղդան |
| Գրասենյակ. Հաշվ | հատ | 7 | 1 | 7 | գ.Յաղդան |
| Հեռախոսի ապարատ | հատ | 17 | 1 | 17 | գ.Յաղդան |
| Ընթերց.սեղ. | հատ | 120 | 2 | 240 | գ.Յաղդան |
| գրապահարան | հատ | 280 | 1 | 280 | գ.Յաղդան |
| Աթոռ | հատ | 210 | 7 | 1470 | գ.Յաղդան |
| Գրասեղան | հատ | 12000 | 1 | 12000 | գ.Յաղդան |
| Հեռախոս | հատ | 20300 | 1 | 20300 | գ.Կողես |
| Անխափան սնուցման սարք 1 / | հատ | 42200 | 1 | 42200 | գ.Կողես |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| UPS 1 | | | | | |
| Համակարգիչ G1840 | հատ | 65000 | 1 | 65000 | գ.Կողես |
| Ֆլեշ հիշողություն | հատ | 21000 | 1 | 21000 | գ.Կողես |
| Ֆլեշ հիշողություն | հատ | 26000 | 1 | 26000 | գ.Կողես |
| WEB խցիկ | հատ | 14070 | 1 | 14070 | գ.Կողես |
| Ծածկոց բրդյա 1,5x2մ | հատ | 9850 | 1 | 9850 | գ.Կողես |
| Լոմ երկաթե 1.3 մ | հատ | 6400 | 1 | 6400 | գ.Կողես |
| Բահ | հատ | 3400 | 7 | 23800 | գ.Կողես |
| Լապտեր | հատ | 3600 | 15 | 54000 | գ.Կողես |
| Վրան Pinery | հատ | 183090 | 1 | 183090 | գ.Կողես |
| Հեռախոսակապ NOKIA | հատ | 26000 | 1 | 26000 | գ.Հովնանաձոր |
| Wi-Fiերթուղիչսարք | հատ | 110000 | 1 | 110000 | գ.Հովնանաձոր |
| Էլեկտրատաքացուցիչ | հատ | 13500 | 1 | 13500 | գ.Հովնանաձոր |
| ԴյուրակիրհամակարգիչFujitsu | հատ | 154000 | 1 | 154000 | գ.Հովնանաձոր |
| ՄկնիկFujitsu | հատ | 2300 | 1 | 2300 | գ.Հովնանաձոր |
| Պայուսակ SUMDEX | հատ | 5400 | 1 | 5400 | գ.Հովնանաձոր |
| Համակարգիչ օգտագործ. կոմպլ. | հատ | 125000 | 1 | 125000 | գ.Հովնանաձոր |
| Ստեղնաշար | հատ | 8600 | 1 | 8600 | գ.Հովնանաձոր |
| կախիչ | հատ | 7420 | 1 | 7420 | գ.Հովնանաձոր |
| Գրքեր /դպրոցին հանձնված/ | հատ | 0 | 1167 | 0 | գ.Հովնանաձոր |

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**